ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԸ Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱԼ. Ա. ՕՀԱՆՅԱՆ

Ռափայել Պատկանյանի քաղաքական-հասարակական հայացքներում առանձնահատուկ տեղ է գրավում սոցիալ-տնտեսական հարցը, որը նրա հրապարակախոսության մեջ բավականին քննվել է։ Այնտեղ խնդրի արծարծումը ավելի բացահայտ ու հետևողականորեն հանդես է գալիս իր հիմնադրած արհեստավորական դպրոցի հեռանկարների ու նպատակների շարադրման կապակցությամբ։ Երկարատև որոնումները Պատկանյանին հանգեցրին այն կարծիքին, որ «սոցիալական հարցը» կարող է լուծվել արհեստավորական դպրոցի, այսինքն՝ ուսման հետ արհեստների տիրապետման միջոցով։

Հայտնի է, որ XIX դ. երկրորդ կեսում ֆեոդալական-կալվածատիրական հասարակարգի քայքայումը և կապիտալիզմի արագ զարգացումը է՛լ ավելի խորացրին դասակարգային շերտավորումը։ Վաշխառուական և առևտրական կապիտալի հետ միասին արդյունաբերական բուրժուազիան ոտնատակ էր տալիս միջակ շերտավորումը և ավելացնում չքավորների բանակը։ Նոր Նախիջևանը, լինելով ցարական Ռուսաստանի գավառային փոքրիկ կենտրոններից մեկը, որոշ առանձնահատկություններով հանդերձ, ենթակա էր նույն հասարակական զարգացմանը և տեղաշարժերին։ Պատկանյանի հրապարակախոսությունը պարզորոշ ցույց է տալիս, որ գավառային այդ փոքրիկ քաղաքում ևս «ճնշողն ու ճնշվողը հավիտենական անտագոնիզմի մեջ են եղել իրար հետ...»[1]։

1861 թ. ցարական մանիֆեստով ճորտատիրությունը վերացվեց, սակայն «ազատվածները» հող չստացան։ «Ընդհանրապես 60-ական թվականների ամբողջ «ռեֆորմների դարաշրջանը»,— գրել է Լենինը,— գյուղացուն թողեց աղքատ, ընկճված, խավար, կալվածատեր-ճորտատերերին ենթարկված և՛ դատարանում, և՛ վարչության մեջ, և՛ դպրոցում, և՛ զեմստվոյում»[2]։ Լենինը ցույց տվեց, որ գյուղացիական ռեֆորմից հետո արագությամբ սկսեց զարգանալ կապիտալիզմը[3]։

Ժողովրդի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքում կատարվող այս փոփոխությունները, տեղաշարժերը հրապարակախոս Պատկանյանը յուրովի էր ընկալում ու գնահատում։ Նա չէր կարող չնկատել այն նորօրյա դարձերը, որոնք սկսել էին տակնուվրա անել հայ իրականությունը։ Սակայն Պատկանյանն այդ երևույթի միայն մի կողմը ընկալեց՝ տրոհվող տնտեսություն, ունեցվածքի բևեռացում, ազգի սոցիալական պրոբլեմի առավել մեծացում։ Այդ պատճառով էլ զարգացման եվրոպական-կապիտալիստական ուղին նրան ներկայացավ աղետներով ու անողորմ պրակտիցիզմով։

---

1 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, էջ 33։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 17, էջ 131։

3 Նույն տեղում, էջ 131—132։

Պատկանյանի բազաքական-հասարակական հայացքները ձևավորվել էին նախ՝ Գաբրիել Պատկանյանի և ապա՝ ազգային-պահպանողականների ազդեցության ներքո։ Հրապարակախոսի տնտեսական հայեցողությունը նրա քաղաքական-հասարակական հայացքների կարևոր օղակներից մեկն է։ Նրա սոցիալ-տնտեսական ծրագիրը պայմանավորված էր մի շարք ուրույն հանգամանքներով. «Պատկանյանը նախապես լավ հանգամանքներում գտավ իր դասին։ Նոր Նախիջևանի արհեստավորական խավերը տնտեսական կշիռ ունեին և զղալիորեն բավարարում էին մերձակա շուկայի պահանջները։ Այդ հայրենական քաղաքի մանր բուրժուազիան հարստության տեր էր դառնում, ժողովուրդ էր երևակայում իրեն, բայց և շոյվում բուրժուական հովերով։ Եվ քանի որ դեռևս առկա չէր արդյունաբերական խոշոր բուրժուազիայի սպառնալիքը, ուստի և նրա սոցիալական գիտակցության մեջ դեռ չէր ներթափանցում քայքայման հոգեբանությունը։ Հանձինս այս խավերի և այս հանգամանքներում գտավ Պատկանյանը հայ ժողովրդին և սրա վրա էլ խարսխեց իր ազգային և սոցիալական իդեալները»[4]։

Սկսած 60-ական թվականներից՝ Պատկանյանին հուզել ու գերել է արհեստավորական դպրոցի գաղափարը, որն իր հերթին պայմանավորված էր երկու կարևոր հանգամանքով։ Նախ՝ Գ. Պատկանյանն էր, որ հայկական ավանդական արհեստների չքանալու, անհետ կորչելու տխուր իրողությունը դարձրեց 50—60-ական թվականների հայ հասարակական միտքն զբաղեցնող խնդիրներից մեկը, որին արձագանքեց այդ ժամանակաշրջանի մեր լավագույն պարբերականը՝ «Հյուսիսափայլը», հանձին Միքայել Նալբանդյանի։ Երկրորդ՝ Ռ. Պատկանյանը հավանաբար տեղյակ էր, որ Ռուսաստանի տարբեր քաղաքներում, սկսած 70-ական թվականներից, գործում էին հատուկենտ մասնագիտացված արհեստավորական ուսումնարաններ[5]։

Վերոհիշյալ երկու հանգամանքները պարարտ հող նախապատրաստեցին նման գաղափարի ծնվելուն, իսկ այդ գաղափարը և դրա իրականացման ծրագիրը շատ պարզ ու հասարակ էին։ Նա առաջարկում էր հիմնել արհեստավորական դպրոց՝ հետագայում նման դպրոցների ցանցը ամբողջ հայոց աշխարհում, այդ թվում նաև բոլոր հայաշատ քաղաքներում տարածելու նպատակով։ Արհեստավորական դպրոցի գաղափարը Ռափայել Պատկանյանի հրապարակախոսության մեջ առաջին անգամ արծարծվել է 1878 թ., «Արվեստի վարժատուն» հոդվածում[6], որը նրա հրապարակային ելույթներից մեկն էր։ Ըստ Պատկանյանի՝ ժողովրդի «բարոյական ստրուկ» լինելը և նրա տնտեսական անտանելի վիճակը հնարավորություն չեն տալիս մտածելու լուսավորական-կրթական փրկիչ օջախներ ստեղծելու և զարգացնելու մասին. «Իմ կարծիքով ազգ սիրողը,— գրում է նա,— ամեն բանե առաջ նրան հաց պիտի տա. միայն կուշտ մարդը ընդունակ է խելոք գաղափարներ սեփականելու. քաղցած փորը փիլիսոփայության համը չգիտե»[7]։ Իսկ հաց, նրա կարծիքով, պիտի տա «ազգ

---

4 Ս. Սարինյան, Հայկական ռոմանտիզմ, Երևան, 1966, էջ 314։

5 «Энциклопедический словарь Русского библиографического института Гранат», т. 36, ч. I, М., 1932, стр. 464.

6 Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1968, էջ 216։ Հոդվածը առաջին անգամ տպագրվել է «Մշակում» (1878, № 196)։

7 Նույն տեղում. էջ 221։

սիրողը». «Տվեք ազգին հաց, ազգի հացը նրա ձեռքի ճարտարության մեջ է...»[8]։

Բազմաթիվ հարցեր են շոշափված հոդվածում, բայց, ցավոք, դրանք իրենց արժանի պատասխանը չեն գտել։ Պատկանյանը շատ երկար խորհելով ժողովրդի «տնտեսական» հարցի մասին, հանգում է այն վերջնական կարծիքին, որ միակ փրկությունը «արվեստական» դպրոցների հիմնումն է. «Այս չէ՛, այն չէ՛, ապա ի՞նչ է մեզ հարկավոր, կհարցնեն մեզ նախիջևանցին,—իրեն հատուկ կրքոտությամբ գրում է Պատկանյանը և պատասխանում,—մեզ պետք է այնպիսի ուսումնարան, ուր տղան կարդալու հետ մեկտեղ սովորի մի հացատու ձեռարվեստ ևս, որպեսզի նա, վարժատունեն ոտքը դուրս դրած չիդրած՝ ոչոքի օգնության կարոտ չլինի, ոչոքի առջև իր ազնիվ գլուխը չիճկե, իր մատղաշ հասակեն չիմանա ի՛նչ ասել է այն ստորաքարշ խոնարհությունը, որ պտուղ է անընդունակության և ստրկության, այլ յուր պիտույքը ինքը իր ձեռքով հոդա. իր կամքը, իր կարծիքը, իր արդար դատողությունը չղոհե մարդոց օգնության հույսին, ազատ մարդ լինի և ո՛չ թե հավիտենական ստրուկ»[9]։ Այս տողերը Պատկանյանի սոցիալ-տնտեսական հայացքների հավատամքն են։ Ուրեմն, ըստ Պատկանյանի, «հացատու ձեռարվեստը» մարդուն կարող է տալ ազատություն և փրկել «հավիտենական ստրուկ» լինելուց։ Հրապարակախոսը ցույց տալով ապագա արվեստական դպրոցի առավելությունները և սպասվելիք բարիքները, ոգևորված եզրակացնում է. «Այս այն վարժատունն է (արվեստական—Ա. Օ.), որ մի օր մեր քաղաքին (Նոր Նախիջևան— Ա. Օ.) կյանք, վերանորոգումն, շարժմունք պիտի տա»[10]։

Պատկանյանը կտրականապես չմերժելով այլ տիպի դպրոցները և ցույց տալով դրանց թերի կողմերը, վերջնականապես ամփոփում է. «Մեր քաղաքացիին պետք է բարոյական ստրկությենեն ազատվել և օրինավոր մարդոց կարգը անցնել։ Դրա համար պետք է հայ երեխայոց (երկսեռ) բազմության ա, բ, գ, դ-ի հետ միասին մի քանի ձեռարվեստ սովորեցնել։ Այժմ մեր քաղաքի տղայոց սովորածը ո՛չ թե ուսում է, այլ ժամանակի կորուստ է»[11]։

Պատկանյանը իր ստեղծագործական կյանքում բազմաթիվ հոդվածներ է գրել և հրապարակային ելույթներ ունեցել դպրոցների նշանակության և կարևորության մասին, սակայն «Արվեստի վարժատան» խնդիրը նրա սոցիալ-տնտեսական հայացքների հիմքն է։

Ուշադիր կարդալով լուսավորական կրթական խնդիրների վերաբերյալ Պատկանյանի 70-ական թվականներին գրած հոդվածները, դժվար չէ նկատել հեղինակի էվոլյուցիան։ Ռ. Պատկանյանը «Արվեստի վարժատունը» ընդունելով որպես փրկության և ազատության փարոս, չի մերժել նաև այլ բնույթի դպրոցների դոյությունը։

Համեմատությունները և զուգահեռները այլ դպրոցների հետ ավելի են բացահայտում հարցի էությունը և, հավանաբար, ինչ-որ կապ գոյություն ունի «թեմական դպրոցի» և «Արվեստի վարժատան» միջև։ Այսպես, օրինակ, հրապարակախոսը երկրորդական նշանակություն է տալիս ռեալական դպրո-

---

8 Նույն տեղում։
9 Նույն տեղում, էջ 220։
10 Նույն տեղում, էջ 221։
11 Նույն տեղում, էջ 222։

ցին. «Ես չեմ ասում, որ ռեալական վարժարան չունենանք. ո՛չ, Աստված մի՛ արասցե. ռեալական վարժատունը մեզ շատ պետք է, բայց այնքան, ինչքան որ պետք է մարդուս, լավ ճաշեն ետև, կերածը մարսելու համար, մի թաս խահվե ու մի Հավաննայի սիգար...»[12]։

Հեղինակը քննադատում է Նոր Նախիջևանում գործող համարյա բոլոր դպրոցները, անվանելով դրանք «անկելանոց» կամ «ցուխտհաուզ» (քավարան)։ Բայց նույն անաչառ վերաբերմունքը չի ցուցաբերում հոգևոր դպրոցի նկատմամբ։ Մինչև 1878 թ., թերությունները քննադատելով հանդերձ, Պատկանյանը ջերմորեն պաշտպանում էր հոգևոր դպրոցը[13], որպես լեզվի և հավատի պահպանման միջոց[14]։

Պատկանյանի համար բեկումնային պետք է համարել 1878 թ., երբ մոտ 30 տարվա ստեղծագործական ճանապարհ անցած հրապարակախոսը առաջին անգամ համարձակվում է հոգևոր դպրոցը «վերանորոգել» ըստ իր ծրագրի։ Արհեստակցական թեքումով հոգևոր դպրոցը գովաբանելուց հետո, նա գրում է. «Հոքէվոր դպրոցը, Տէրրս աչօղէ նը, տահա ուրիշ պանէր պիտի տա քաղաքիս, վոր հէչ մէկ վարժատուն ինչվա աս օրս տուված չէ ու տալու ալ ծան չի լսվիլ։ Հոքէվոր վարժատունը պիտի պանա 4—5 զէնիաթի քլասնէր, վոր ամեն աշկէրտ մէծ-պզտիկ, զէնկին-ախքատ, հարուստ, հէչ օլմասա, մէկ էրկու զէնիաթ սօրվէնա, վոր մէկ օր նացա համար օսկի ապրռճան պիտ 'լա»[15]։

Սակայն, չանցած մեկ տարի, «Հոգևոր դպրոցների վիճակը» հոդվածում Պատկանյանը ինքն իրեն «ուղղում» է՝ հրաժարվելով իր իսկ կողմից առաջարկված աշխատանքային թեքումով հոգևոր դպրոցների տարբերակից։ Հրապարակախոսը գտնում է, որ հոգևոր դպրոցը «կարող է միայն լավ վարդապետներ, լավ քահանաներ և լավ տիրացուներ պատրաստել, իսկ լավ ժողովուրդ՝ երբե՛ք։ Եթե մենք նորանից (եկեղեցուց— Ա. Օ.) պահանջենք այդ, հիմար կլինինք, իսկ եթե նա խոստանա, թեև ակամա, այսուամենայնիվ նա մեզ խաբած կլինի, որովհետև այդ նորա զորութենեն և ընդունակութենեն վեր է։ Թող եկեղեցին յուր պարտքը բարեխղճությամբ կատարե, իսկ մենք աշխարհականքս կատարենք մերը։ Բաժանենք աշխատանքը, որ գործերս հաջողությամբ առաջ երթա. չմոռնանք քաղաքատնտեսության այս անհերքելի ճշմարտությունը»[16]։ Հրապարակախոսը նույն միտքը այլ առիթով կրկնում է ավելի որոշակի. «Հոգևոր դպրոցը չէ՛ կարող և չէ՛ պետք, որ աշխարհական վարժատունի տեղը բռնե»[17]։

Վերջապես 1880 թ. սեպտեմբերի 28-ին, «առ մեծի ուրախություն» հանդիսավոր իրադրության մեջ Նոր Նախիջևանում բացվում է «Արվեստական դպրոցը», «որո կարևորությունը արդեն ժամանակե ի վեր զգալի էր ամենին»— գրում է նորաբաց դպրոցի տեսուչ Պատկանյանը[18]։

---

12 Նույն տեղում, էջ 221։

13 Նույն տեղում, էջ 222։

14 Նույն տեղում, էջ 583։

15 Նույն տեղում, էջ 472։

16 Նույն տեղում, էջ 291։

17 Նույն տեղում, էջ 292։

18 Նույն տեղում, էջ 328։ «Արվեստական դպրոցի կանոնադրությունը», «Արվեստական դպրոցը Նոր Նախիջևանի մեջ» հոդվածը և դպրոցի հանդիսավոր բացման ժամանակ արտասանած ճառերը առաջին անգամ տպագրվել են «Փորձում» (1880, № 10)։

Ինչ խոսք, «Արվեստական դպրոցի» ստեղծումը Պատկանյանից բավականին ուժ ու եռանդ է խլել։ Նա ոչ միայն այդ դպրոցի մտահղացողն էր, այլև հիմնադիրներից մեկը։

«Արվեստական դպրոցը Նոր Նախիջևանի մեջ» հոդվածում Պատկանյանը հայտնում է, որ ապագա դպրոցի հարցը քաղաքի հասարակությունը սկսել է քննարկել դեռևս 1876 թ., երբ նախիջևանցիք միջոցառումներ էին ծրագրում իրենց քաղաքի հիմնադրման հարյուրամյակը տոնելու։ Հոդվածում Պատկանյանը փորձում է ապացուցել, որ «հայը առավելապես եղել է և՛ է արվեստագետ, քան թե վաճառական աղգ»[19]։ Հաստատելով արհեստների կատարած դերը հայերի կյանքում՝ սկսած հին ու միջին դարերից, Պատկանյանը նշում է, որ հայերը տարօրինակ ձևով անտարբեր մնացին XIX դ. տեխնիկայի և գիտության առաջընթացին. «Բայց մեր արվեստագետ պապերը և հայրերը համառեցան, եվրոպական հառաջադիմության և կատարելագործությանը հաղորդակից չեղան և մնացին իրենց ավանդական (պապենական) վարպետության մեջ»[20]։ «Արվեստը,— եզրակացնում է Պատկանյանը,— այդ «ոսկի ապարանջանը», այդ՝ միջակ ժողովրդի հաց և ամենակարևոր պիտույք հայթայթողը, թռավ, փախավ հայերի ձեռքեն և, հանկարծ մի պատվական օր, 3/4 մասը հայ ժողովրդին մնաց առանց հանապազօրյա հացի։ Այս ցավալի անցքը տևեց (գոնե Նոր Նախիջևանի համար) 40 տարի։ Ժամի սանդուղքները լցվեցան մուրացկաններով. մի ժամանակվա փարթամ արվեստավորները, աղքատության պարկը շալակած, ընկան դռնե-դուռն՝ օրվա հացը մուրալու»[21]։

Ստեղծված ծանր վիճակից դուրս գալու համար «ի՞նչ անել» հարցին Պատկանյանը պատասխանում է. «Բարեմիտ քաղաքացիները մտախոհության մեջ ընկան. սկսան փնտրելու այս ամեն տարաբախտությունների սկզբնապատճառը, և... հիմնվեցավ Նոր Նախիջևանի Արվեստական դպրոցը»[22]։

Հոդվածագրի կարծիքով հին և միջին դարերում, մեր պապերը «երջանիկ վիճակի» չեն հասել, որովհետև «ուսումն ու գիտութենե զուրկ էին»։ Ուրեմն, արհեստի և գիտության միասնությունն այն փրկարար զենքն է, որով հայերը կարող են հասնել ապահով վիճակի. «Հային ուրիշ փրկություն չիկա,— գրում է նա,— եթե ոչ արվեստի ու լուսավորության միջոցներով հարթել և հորդել յուր ճանապարհը՝ կենցաղուցս փշալից ու տատասկոտ դաշտի մեջ։ «Որ ունի ականջս լսելո՝ լուիցէ»[23]։

Ժամանակակիցների վկայությամբ, Պատկանյանի «Արվեստական վարժատան» շեմին խոշոր տառերով փակցված էր. «Բանուկ ձեռքը չի մուրալ»[24]։ Կասկածից վեր է, որ ձեռք բերված հաջողությամբ Պատկանյանը մեծ ուրախություն է ապրել և այդ ոգևորությունը նա 1881 թ. նամակով հաղորդել է Պետերբուրգում գտնվող Քերովբե Պատկանյանին։

Հրապարակախոսը պարբերական մամուլի միջոցով բազմիցս կոչ է արել իր համաքաղաքացիներին՝ օգնել կիսամերկ և կիսաքաղց աշակերտներին. «Նախիջևանցի՞ եղբայրներ, ժամանակավորապես օգնեցեք այս թշվառ մանր

19 Նույն տեղում, էջ 329։
20 Նույն տեղում, էջ 330։
21 Նույն տեղում։
22 Նույն տեղում, էջ 331։
23 Նույն տեղում, էջ 333։
24 «Տարազ», 1901, № 10, էջ 98։

տղոց, լցրեք նոցա ժամանակավոր ամենահարկավոր պիտույքը, և կտեսնեք, որ 4—5 տարիեն, Աստուծո ողորմությամբ, բավականին կթեթևանա, իսկ 10—15 տարիեն բոլորովին կվերջանա քաղաքիս մեջեն հայ ժողովրդի չքավորությունը, մուրացկանությունը և աղքատ վիճակը... Շուտ-շուտ հիշեցե՛ք այն առածը, թե՝ «թեև աղքատությունը մոլություն չէ, բայց ամեն մոլությանց մայրն է»։ Արվեստը այդ «օսկի ապուճանը» ոչ միայն կջնջե, կանհետացնե մեր քաղաքի մուրացիկների դասակարգը, այլև մեր սիրելի Նախիջևանը ոսկիով կլցնե և կվերադարձնե նորան այն երանելի վիճակն, որի մեջ նա գտնվում էր օրես 30—40 տարի առաջ, և որ դուք ամենայն օր ա՞խ քաշելով հիշում եք»[25]։

Որոշ ժամանակ անց Պատկանյանը տպագրում է «Բաց նամակ Նոր Նախիջևանցիներուն». «Ուսումը,— դրում է նա,— տալիս է խելք, բայց հաց՝ ո՛չ սիշտ, արվեստը տալիս է հաց, բայց ո՛չ խելք. ուսումը և արվեստը միացած՝ մեր ազգին կուտան խելոք հարուստներ։ Ուրեմն՝ «հայերիս փրկությունը արվեստի և գիտության մեջ է»[26]։

«Արվեստական դպրոցը» հիմնադրելուց ընդամենը երկու տարի հետո, 1882 թ. սեպտեմբերի 26-ին, Նոր Նախիջևանում բացվում է Կոկոյան[27] օրիորդաց գիշերօթիկ դպրոցը, որը նույնպես արհեստավորական թեքումով էր։ Այս դպրոցի բացման ժամանակ Պատկանյանը հանդես է եկել «Արվեստական դպրոց առ Կոկոյան վարժարան»[28] ուղերձով։ Ջերմորեն ողջունելով դպրոցի սանուհիներին, նա միևնույն ժամանակ իր պատգամներն է հաղորդել նրանց. «Արվեստական դպրոցի սաներն կխնդրեն իրենց քույրերին՝ Կոկոյան վարժարանի սանուհիներին, խորունկ արմատացնել իրենց մեջ բարեկրթությունը և աշխատասիրությունը, որպեսզի ժամանակն անցնելով, երբ երկուսը ևս չափահաս մարդիկ և քաղաքացիք կլինեն, իրենց կողմանե պարզապես և գիտակցաբար կարողանան հորդորելու իրենց ժամանակակից երեխայքին նույն առաքինությունը»[29]։

Պատկանյանն իր տնտեսական գաղափարների նկատմամբ մեծ հավատով էր լցված։ Այդ զգացվում է ոչ միայն հեղինակի հրապարակախոսության մեջ, այլև տարբեր ժանրային ստեղծագործություններում (օրինակ՝ «Պապի» պատմվածքում, «Ջենիաթ» բանաստեղծության մեջ և այլն)։ Ինչպես ցույց են տալիս փաստերը, գրողի ստեղծագործություններում պարզորոշ ընդգծվում է արհեստավորության դասի, մանր արտադրողների կարևորությունը հայ ժողովրդի կյանքում։ Պատկանյանը հանդես է գալիս ժողովրդի այդ միջին խավի՝ մանր արտադրողների-արհեստավորների ջերմ պաշտպանի դերում։

Սոցիալական անհավասարությունը հստակորեն երևան էր գալիս նաև ագրարային հարցում։ Եվ իզուր չէ, որ սոցիալ-տնտեսական պրոբլեմների մեջ կարևոր տեղ էր գրավում հողի խնդիրը։ Պատկանյանին հոգեհարազատ ազգային-պահպանողականները երբևէ հողի խնդրին գործնական հստակ պա-

---

25 Ռ. Պ ա տ կ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 336։

26 Նույն տեղում, էջ 339։

27 Կոկոյան Մկրտիչ (1796—1865) Նորնախիջևանցի հարուստ վաճառական, որի կտակած գումարներով հիմնադրվեց վերոհիշյալ դպրոցը։

28 Գրականության և արվեստի թանգարան, Ռափայել Պատկանյանի ֆոնդ (այսուհետև՝ ԳԱԹ, ՌՊՖ), № 244։

29 Նույն տեղում։

տասխան չեն տվել։ Պահպանողականների առաջարկները և պատասխանները տարուբերվել են «վերևից սպասվող ռեֆորմների»[30] և բարեխիղճ կալվածատերերի կողմից զիջումների միջև։ Բայց բոլոր դեպքերում, ըստ պահպանողականների մտայնության, պետք է անձեռնմխելի մնային եկեղեցական կալվածքները, մասնավոր և ժառանգական հողաբաժինները։ Պահպանողականները հարուստներին «հայրենասիրության» կոչ էին անում. քանի դեռ հողը էժան է, գնել այն, իսկ հետո թանկ դնով վաճառել գյուղացուն[31]։ Այդ ձևով հարուստները կօգնեին գյուղացիներին հողատեր դառնալու և միևնույն ժամանակ սրբությամբ կկատարեին իրենց հայրենասիրական պարտքը։

Պատկանյան-հրապարակախոսը տարբեր առիթներով բազմիցս անդրադարձել է հողի խնդրին, չնայած այդ հարցի շուրջը առանձին հոդվածներ չի տպագրել։ Դիմելով Մոսկվայի հայ ուսանողներին, նա գրում է. «Պատմությունը մեզ հայտնի ասում է, որ հայ ժողովուրդը երբեք ունեցած չէ սեփական հող, որ մշակեր և դորանով ապահով ապրուստ ունենար. հողը պատկանում էր տասնյակ, հարյուրյակ հողատեր-նախարարներին և վանքերին, հետո սուլթանի և շահի սեփականությունը դարձավ»[32]։ Այս ուղերձում Պատկանյանի արծարծած մտքերը՝ վերջիվերջո կապվում են հայերի հող չունենալու գաղափարի հետ, և հին դարերից սկսած նրանց բոլոր դժբախտությունները՝ աղքատությունը, գաղթականությունը Պատկանյանի կողմից պատճառաբանվում են այդ ուրույն սոցիալ-տնտեսական ու քաղաքական-հասարակական հանգամանքներով։

«Հայ ուխտավորի նամակներում» (1887) հրապարակախոսը սրտի կսկիծով գրում է, որ հիմա բոլորի «խոսակցության նյութը» դարձել է «մեր ստորադաս հայ ժողովրդի սոսկալի չքավորությունը և վարելահողի պակասությունը»[33]։ Չնայած Պատկանյանը հողի խնդրին անդրադարձել է նաև իր այլ ստեղծագործություններում, բայց այդ առումով ավելի բնորոշ է հարց ու պատասխանի ձևով գրված «Վարդապետարան Հայաստանի ազատության» փիլիսոփայական-քաղաքական տրակտատը։ Տեսնենք, թե ապագայում ազատագրված Հայաստանում ինչպե՞ս պետք է բաշխվեին հողատարածություններն ըստ «Վարդապետարանի»։ «Գալոց ազատված Հայաստանի մեջ ազնվականության, ժառանգական տիտղոսներ, մեծամեծ հողային կալվածատիրություն պիտի լինի՞, թե ո՛չ։— Այո՛ պիտի լինին։ Ժառանգական տիտղոսներ, մեծամեծ հողային կալվածատիրություն պիտի ստանան նոքա՝ կամ նոցա ժառանգները, որոնք առաջինը կբարձրացնեն սուրը Հայաստանի ազատության համար և կամ կգրավվին կյանքերեն արյան դաշտի մեջ։ Այսպիսիք (և միայն այսպիսիք) կկազմեն Հայաստանի բարձրագույն և ամենահարուստ (հողային կալվածներով) դասակարգը»[34]։

«Վարդապետարանի» այս ուրույն երկխոսությունից պարզվում է, որ «գալոց ազատված Հայաստանի մեջ մեծ-մեծ հողային կալվածատիրություն պիտի լինին»։ Հարկ է նշել նաև այն, թե ինչպես էր Պատկանյանը պաշտպա-

30 Վ. Ռշտունի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երևան, 1956, էջ 15։

31 Խ. Գ. Գուլանյան, Ուրվագծեր հայ տնտեսագիտական մտքի պատմության, Երևան, 1969, էջ 489։

32 Ռ. Պատկանյան, նշվ. աշխ., էջ 443.

33 Նույն տեղում, էջ 135։

34 ԳԱՌ, ՌԿՖ, № 198։

նում հողային կալվածքների անհրաժեշտությունը. «յուր անձը վտանգի չենթարկելով ամեն մի հայ կարող է և պարտավոր է Հայաստանի մեջ ունենալ (այս ամենագլխավորն է) մեծ կամ փոքրիկ հողային կալվածք»[35]։ Կամ էլ, ի շարս ամենագլխավոր հայկական առաքինությունների, պետք է «համոզել և օգնել ամեն մի հայի Հայաստանի մեջ սեփական անշարժ կալվածք և հող գնելու...»[36]։ Իսկ թե հրապարակախոսի երազած ազատագրված Հայաստանում «միլիոնավոր ժողովրդին» ի՞նչ հողաբաժիններ են տրվելու, «Վարդապետարանում» ոչ մի ակնարկ չկա։ Հակասությունը աներկբայելի է։ Պատկանյանը հակասում է նախ և առաջ ինքն իրեն։ Հողի խնդրի վերաբերյալ նրա այս ինքնատիպ խոհերը, վերջիվերջո, միաձուլվում են պահպանողական հոսանքի դավանած ծրագրերին, որոնցում նույնպես առկա էին տարբեր տեսակետներ։

Պատկանյանի տնտեսական գաղափարախոսության մեջ որոշակիորեն ընդգծվում է բարերարության և բարերարներին հատկացված դերը։ Հրապարակախոսի խորին համոզմամբ՝ փրկության առաջին ջահը արհեստավորական դպրոցը պետք է լիներ, բայց նա մեծ սպասելիքներ և հույսեր ուներ նաև հարուստներից, բարեգործներից։ Պատկանյանը միամտորեն գտնում էր, որ եթե բոլոր հայ հարուստները օգնեն չքավոր դասակարգին, ապա տնտեսական անհավասարությունը կարող է վերանալ։ Այդ գաղափարն է քարոզվում նրա մի շարք հրապարակախոսական երկերում[37]։ Ռ. Պատկանյանը գրանցում զարգացնում է այն միտքը, որ «առանց առաքինության» (բարեգործության, զոհաբերության—Ա. Օ.) չկա ազգի փրկություն», այդ իսկ պատճառով էլ նա կոչ է անում հետևել հարուստներ՝ Կոկոյանի, Պալապանյանի, Իզմիրյանի և այլոց օրինակին։ Սակայն, միաժամանակ, հրապարակախոսը դատապարտում է քաղաքի մի խումբ «ցեցերի», հարուստների, շահագործողների, որոնց պատճառով ստեղծվել է «մի անտանելի կախյալ դրություն», «քսան և հինգ հազարյա ժողովրդի բերանը հավիտյան փակած է, լեզուն կտրած է, ձեռքերը շղթայած են»[38]։ Իսկ դրա պատճառը ամենից առաջ նա համարում է այն, որ Նախիջևանը լցված է միայն գնող ու ծախող վաճառականներով, մի երևույթ, որը ինքնին բացասական է. «Նախիջևանցոց բոլոր հարստությունը դիզված է մի քանի ձեռք, իսկ մնացած ժողովուրդը, շատ սակավ, ուղղապես կամ անուղղապես փողի ու քռեդիտի կախումն ունի այդ մեկ քանի հարուստներեն»[39]։ Սոցիալական անհավասարության խնդիրը լուսաբանելիս Պատկանյանը այն կապում է բարքերի այլափոխության և մոլորությունների երևան գալու հետ։ Եթե աղքատությունը հետևանք է սոցիալական անհավասարության, ուրեմն այն իր հերթին նախապատճառ է չարիքների։ «Աղքատությունը մոլություն չէ, բայց ամեն մոլության մայրն է»— հաճախ սիրում էր կրկնել Պատկանյանը, որի իմաստը մարմնավորվել է հրապարակախոսի «Բարեգործություն մաս-

35 Նույն տեղում։

36 Նույն տեղում։

37 «Բարեգործություն մասնավոր և հասարակական» (1890), «Աղա Մկրտիչ Կոկոյան» (1882), «Արվեստական դպրոց առ Կոկոյան վարժարան» (1882, ԳԱԹ, ՌՊՖ, № 244), «Ամենակարևոր գործի համար, ամենախոնարհ խնդիր» (1882, ԳԱԹ, ՌՊՖ, № 245), «Մինաս Պալապանյանի թոշակը» (1884), «Հովսեփ Իզմիրյանի մահվան առթիվ» (1882), «Հայոց բարեգործական ընկերության պատմությունը» (1885)։ Առանց հղումների հոդվածները տպագրված են Ռ. Պատկանյանի երկերի ժողովածուի 5-րդ հատորում։

38 Նույն տեղում, էջ 216։

39 Նույն տեղում, էջ 217։

նավոր և հասարակական» հոդվածում[40]։ Նա դանում է, որ գող կամ մարդասպան դառնալու հարցում ևս մեղավոր են հարուստները[41], քանի որ վերջիններս իրենց բարեգործությամբ չեն վերացրել աղքատությունը, բայց միևնույն ժամանակ նա չի կասկածում, որ «հարուստը երբեք իր փողը առանց շահի չի տալ իր փոքր, չքավոր եղբորը, որքան որ կարող է իր փոխատվության փոխարեն կառնու նրանից տոկոս կամ ղուտ փողով, աշխատանքով, կամ բարոյական ճնշումով»[42]։ Այստեղ ևս ակնհայտ է Պատկանյանի աշխարհայացքում գոյություն ունեցող հակասությունը։

Այս փաստերը ցույց են տալիս, որ հրապարակախոսը, ինչպես և պետք էր ենթադրել, չէր կարողանում հայտնաբերել տվյալ հասարակարգի սոցիալական անհավասարության արմատները, ուստի և առաջադրում էր միանգամայն անիրական լուծումներ։

Տիրող անարդարության, անհավասարության կարգերում սոցիալական պայքարի անխուսափելիությունը շատ լավ զգում էր հրապարակախոսը հենց թեկուզ Նախիջևանի օրինակով, ուր տարբեր սոցիալական-հասարակական խավերի բախումները միշտ առկա են եղել և ամեն անգամ սուր բնույթ կրել։ Պատկանյանի գրիչը ահ ու սարսափ էր տարածում Նախիջևանում։ Սյուլյուկից վախենում էին և «թոռմազ» աղաները, և՛ անգրագետ հոգևորականները, և՛ պաշտոնյաները. «Կյանքիս ամենագեղեցիկ մասը,— արդարացիորեն գրել է Պատկանյանը,— ես զոհեցի դոցա հետ մաքառելով, շարաշար խարազանելով և անխնայաբար վայր կործանելով նոցա անարժանապես տիրապետած գահույքներեն»[43]։

Պատկանյանի ուժգին բողոքը և ցասումը աշխատավոր ժողովրդի արյունը ծծողների դեմ իր պատկերավոր արտահայտությունն է գտել հետևյալ տողերում. «Ձեր անունը վագր է, միշտ ծարավ անմեղ արյունի, ձեր կյանքը ազգին միշտ թանկ կնստի, դուք ազգի արյունով ապրող եք, դուք միշտ հալածող և սպանող եք նորա հավատարիմ հովիվներուն, ձեր գազանային անձը և ձեր կորյուններուն ապրեցնելու համար պետք է ամբողջ քաղաքի և գավառի բնակիչներու արյուն և քրտինք, ով որ ձեր գործի, ձեր ստրուկը չէ՝ նա ձեր արյունալի ղոհն է. ով չէ սիրում ձեզ, նորա ճակատի վրա գրած է աքսոր, հալածանք և մահ»[44]։ Պատկերավոր և սուր լեզվով գրված այս հոդվածում հրապարակախոսը արյունարբու վագրեր է անվանում Նոր Նախիջևանի ամենահարուստներից Մինաս Խալիպովին, Միքայել Տեր-Գրիգորյանին և սրանց կողմնակիցներին։

Այս ամենից դժվար չէ եզրակացնել, որ Պատկանյանը նկատում էր սոցիալական պայքարի գոյությունը, տեսնում բուրժուական հասարակարգում գործող «մարդը մարդուն գայլ է» սկզբունքը։ Սակայն ստեղծված վիճակից դուրս գալու որևէ ուղի հրապարակախոսը ցույց չէր տալիս։

Փարվելով տնտեսական զարգացման մանր-բուրժուական տեսակետին և վճռականորեն դեմ լինելով կապիտալիստական արտադրահարաբերու-

40 Նույն տեղում, էջ 397։
41 Նույն տեղում, էջ 398։
42 Նույն տեղում, էջ 217։
43 Նույն տեղում, էջ 391։
44 Նույն տեղում, էջ 401։

թյունների մասշտաբային միտումներին, Պատկանյանը յուրատեսակ գունավորումներով զարգացնում է վաղ լուսավորիչների գաղափարները՝ իր հայրենիքի ապագա ճակատագիրը երևցնելով արհեստների, գիտության և մշակույթի միասնական ջանքերի փրկարար հերկի վրա։ Բարոյական ու տնտեսական աղետներ սփռող կապիտալիզմը, որի այլանդակությունների դեմ ծառս էին եղել հայ դեմոկրատական ողջ դրականությունն ու հրապարակախոսությունը, Պատկանյանը չի համարում օբյեկտիվ գործոն, ուստի փորձում է ազգին հեռու պահել դրանից, ընտրելով շրջանցումի, հեռացումի անհնարին ճանապարհը։ Իսկ դա ուղղակի շարունակությունն էր գրողի պահպանողական հայեցության։ Եվ եթե պատմության հետագա ընթացքը մերժեց հրապարակախոսի առաջադրած այդ ուտոպիստական ուղին, ապա, համենայն դեպս, չկորցրեց նրա ազնիվ նկրտումների հմայքը՝ օգտակար լինել ժողովրդին, պաշտպանել նրա անկապտելի իրավունքներն ու մարդկային արժանապատվությունը։ Ինչ վերաբերում է նրա հիմնադրած արհեստակցական դպրոցին, ապա ասենք, որ վերջինիս շրջանավարտներին վիճակված էր խաղալ մի դեր, որն իր ուղղությամբ համադարձ էր հիմնադրի խաղաղաբարո ծրագրին։

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ВОПРОСЫ В ПУБЛИЦИСТИКЕ Р. ПАТКАНЯНА

А. А. ОГАНЯН

Резюме

В публицистике классика армянской литературы Рафаэла Патканяна (1830—1892) особое место занимают социально-экономические вопросы. До сих пор публицистика писателя и, в частности, его социально-экономическая программа не была предметом специального научного исследования. В своих многочисленных статьях писатель пропагандировал развитие ремёсел. В 1880 г. Патканяном была основана в Новой Нахичевани ремесленная школа. Писатель мечтал видеть во всех армянских городах подобные школы как средство избавления народа от нищеты.

Патканян выступал против развития капитализма. В критике Патканяном капитализма проявились ограниченность и противоречивость его социально-экономических воззрений.